

ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՒ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԴԵՄ
ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Զեկույց



Բովանդակություն

Ամփոփագիր	2
I. Ընդհանուր տեղեկություններ	6
II. Դատական պրակտիկայի առանձնահատկություններ	12
III. Վարչարարության խնդիրներ	14
IV. Կարճման որոշումներ	19
ԵԶՐԱՅԱԼԳՈՒՄՆԵՐ	21
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	22



Սույն զեկույցը պատրաստվել է «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Դատական բարեփոխումների խթանում. Հանրային կառավարման որակի բարելավում. արդյո՞ք նոր Հայաստանը նոր իրականություն է ստեղծում» ծրագրի շրջանակներում: Ծրագիրն իրականացվում է ԱՄՆ Ժողովրդավարության ազգային հիմնադրամի (NED) ֆինանսավորմամբ, թիվ 2020-0183 դրամաշնորհի շրջանակներում:

Զեկույցի բովանդակությունը և արտահայտված տեսակետները, կարծիքները պատկանում են ուսումնասիրության և զեկույցի հեղինակներին և հնարավոր է, որ չհամընկնեն ԱՄՆ Ժողովրդավարության ազգային հիմնադրամ կազմակերպության տեսակետների հետ:

Ամփոփագիր

«Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» հասարարական կազմակերպությունը 2020թ. մարտի 1-ից ԱՄՆ Ժողովրդավարության ազգային հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ իրականացնում է «Դատական բարեփոխումների խթանում. Հանրային կառավարման համակարգի բարելավում. արդյո՞ք նոր Հայաստանը նոր իրականություն է ստեղծում» ծրագիրը:

Ծրագրի շրջանակներում իրականացվել է ՀՀ վարչական դատարանում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի (ԱՍՀ) նախարարության դեմ բերված հայցերի առնչությամբ վարույթ ընդունված գործերի ուսումնասիրություն, որի նպատակներից մեկն է վերհանել դատարանի կողմից արձանագրված վարչարարության համակարգային խնդիրները: Մասնավորապես, վերլուծվել են 2019թ. և 2020թ. դատարան մուտքագրված և մինչև 2020թ. հունիսի 30-ը կայացված 42 վճիռներից 40-ը, ինչպես նաև 13 հայցերով կայացված կարճման որոշումներից 9-ը:

Դիտարկված գործերից 27-ը բավարարվել է ամբողջությամբ, 2-ը՝ մասնակի, իսկ 11-ը՝ մերժվել: Հայցերը վերաբերել են կենսաթոշակի նշանակման և (վերա)հաշվարկման, աշխատանքային ստաժի հաշվարկման, երեխայի ծննդյան նպաստների նշանակման և (վերա)հաշվարկի հարցերի: Կենսաթոշակի վերաբերյալ գործերի 70%-ը բավարարվել են ամբողջությամբ:

Գործերից 36-ով ներգրավվել է երրորդ անձ՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը, որից 29-ը դեպքում՝ դատարանի նախաձեռնությամբ, իսկ 7-ով՝ իր դիմումի համաձայն: Առանց ՀՀ ֆինանսների նախարարությունը որպես երրորդ անձ ներգրավելու 4 գործերից 2-ը վերաբերել են երեխայի ծննդյան նպաստների տրամադրմանը, իսկ 2-ը՝ կենսաթոշակի վերահաշվարկին:

Գործով քննությունը վարույթ ընդունելուց մինչև վճռի հրապարակելը գործերի զգալի մասի դեպքում՝ 17 գործով տևել է 7 ամսից մինչև մեկ տարի: Առավել տևական ժամանակ քննվել են կենսաթոշակի նշանակմանը և/կամ վերահաշվարկմանը վերաբերող գործերով հայցերը:

Գործերից 3-ով գործի քննության ընթացքում կայացվել է գրավոր դատաքննություն անելու մասին որոշում:

Վճիռների ուսումնասիրությունը ցույց է տվել, որ գործը քննող դատավորների կողմից չի դրսևորվել միանման մոտեցում կենսաթոշակի վճարման պարտավորեցման և երեխայի նպաստի հետ կապված գործերով հայցվորի՝ պետական տուրքի վճարումից ազատված լինելու հարցում: Այդպես, դիտարկված գործերից 4-ով դատարանը համարել է, որ հայցվորը եղել է պետական տուրքը վճարելուց օրենքով ազատված: Նշված գործերով քննարկվել է երեխայի

նպաստի (2 գործ), աշխատանքային ստաժի հաշվարկի, որը պետք է ներառվեր կենսաթոշակի հաշվարկի մեջ (1 գործ), և կենսաթոշակի հաշվարկի (1 գործ) հարցեր:

Դիտարկված գործերից 12-ով դատարանն արձանագրել է, որ վարչական ակտում այն ընդունելու փաստական և իրավական հիմքերը պատշաճ կերպով ներառված և պատճառաբանված չեն եղել: Դիտարկված գործերից 20-ով դատարանն արձանագրել է, որ վարչական մարմնի կողմից փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկում չի իրականացվել:

Կենսաթոշակի (վերա)հաշվարկին վերաբերող բավարարված 32 հայցերից 8-ը վերաբերել են դատավորին նշանակված կենսաթոշակի վերահաշվարկ կատարելուն: Այդ գործերով դատարանը գտել է, որ դատավորի կենսաթոշակի չափը հաշվարկելիս մինչև օրենքի ուժի մեջ մտնելը, այն է մինչև 01.07.2014 թվականը, որպես դատավոր զբաղեցրած վերջին պաշտոնի համար ստացած աշխատավարձը պետք է հաշվարկային հիմք ընդունվի միայն այն դեպքում, եթե այդ աշխատավարձի հիմքով հաշվարկված կենսաթոշակի չափն ավելի մեծ է, քան «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքով սահմանված աշխատավարձի հիմքով հաշվարկված կենսաթոշակի չափը՝ առաջնորդվելով ՀՀ սահմանադրական դատարանի թիվ ՄԴՌ-1302 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումներով:

Դատարանի կողմից արտահայտած դիրքորոշման համաձայն՝ այն դեպքերում, երբ անձի կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցվել է «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» 9-րդ հոդվածի 5-րդ մասի հիմքով՝ եթե պետական պաշտոն զբաղեցրած անձը կենսաթոշակ նշանակվելուց հետո անցել է զինվորական ծառայության, նշանակվել է քրեակատարողական ծառայողի, դատական ակտերի հարկադիր կատարողի, դատախազի, քննչական կոմիտեի ծառայողի, հատուկ քննչական ծառայության ծառայողի կամ դատավորի պաշտոնում, այդ հիմքի վերանալուց հետո վերջինիս կենսաթոշակը ենթակա է վերահաշվարկման՝ կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցնելուց հետո ձեռք բերած մասնագիտական ստաժի հաշվառմամբ:

Դատարանը հաստատել է, որ արտադատական կարգով կենսաթոշակի չափի նվազեցումը թույլատրելի չէ:

Հատկանշական է, որ աշխատանքային գրքույկներում գրառումները Պատասխանողի կողմից ոչ արժանահավատ համարելու կապակցությամբ Դատարանը նշել է, որ Հայցվորի վկայակոչած փաստը կասկածի տակ դնելու համար առնվազն պետք է հաստատվեր, որ նշված ժամանակահատվածում նշված վայրում աշխատելու վերաբերյալ գրառումներն արժանահավատ չեն, իսկ փաստաթղթերի կամ տեղեկությունների պահպանման համար նախատեսված վայրերում տվյալների բացակայությունը չի կարող վկայել տվյալների անարժանահավատության մասին:


Երեխայի ծննդյան նպաստի վերաբերող գործերով դատարանը հաստատել է, որ նպաստի համար կարող է դիմել ծնողներից յուրաքանչյուրը, այլ ոչ թե միայն մայրը: Այս առումով, երեխայի լավագույն շահերից ելնելով, իրավակիրառ պրակտիկան պետք է առաջնորդվի այնպիսի մոտեցմամբ, որ որևէ էական տարբերություն չպետք է լինի այն հարցում, թե նոր ծնված երեխայի հորից սերված երեխաների խնամքը հոր կողմից իրականացվել է դատարանի որոշմամբ, թե երեխայի մոր հետ փոխադարձ համաձայնությամբ:

I. Ընդհանուր տեղեկություններ

«Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» հասարակական կազմակերպությունը 2020թ. մարտի 1-ից ԱՄՆ Ժողովրդավարության ազգային հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ իրականացնում է «Հանրային կառավարման համակարգի բարելավում. արդյո՞ք նոր Հայաստանը նոր իրականություն է ստեղծում» ծրագիրը:

Ծրագրի շրջանակներում իրականացվել է ՀՀ վարչական դատարանում 12 պետական և համայնքային մարմինների, այդ թվում՝ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության դեմ բերված հայցերի առնչությամբ վարույթ ընդունված գործերի ուսումնասիրություն, որի նպատակներից մեկն է վերհանել դատարանի կողմից արձանագրված վարչարարության համակարգային խնդիրներ: Մասնավորապես, վերլուծվել են 2019թ. և 2020թ. դատարան մուտքագրված և մինչև 2020թ. հունիսի 30-ը կայացված 42 վճիռներից 40-ը, ինչպես նաև 13 հայցերով կայացված կարճաման որոշումներից 9-ը:

Դիտարկված գործերից 27-ը (67,5%-ը) բավարարվել է ամբողջությամբ, 2-ը՝ մասնակի, իսկ 11-ը (27,5%)՝ մերժվել:



Հայցերից 35-ը (83%) վերաբերել են կենսաթոշակի նշանակման, այդ թվում՝ երկարամյա (10 գործ) և (վերա)հաշվարկման (25 գործ), այդ թվում նաև զուգորդված չվճարված կենսաթոշակի վճարման պահանջով, 1-ը՝ աշխատանքային ստաժի հաշվարկման, իսկ 4-ը՝ երեխայի ծննդյան նպաստների նշանակման և հաշվարկման հետ կապված հարցերի: Կենսաթոշակի վերաբերյալ գործերից 24-ը (կամ այդ տեսակի գործերի 70%-ը) բավարարվել են ամբողջությամբ, 2-ը՝ մասնակի, իսկ 9-ը՝ մերժվել: Երեխայի նպաստի վճարման վերաբերյալ գործերից 2-ը բավարարվել են, իսկ 2-ը՝ մերժվել:

Հաշվի առնելով գործերի առանձնահատկությունները՝ դիտարկված գործերի քննության ընթացքում շոշափվել են սեփականության, պատշաճ վարչարարության, սոցիալական ապահովության իրավունքները:

Նշված բոլոր գործերով հայցվոր են հանդիսացել ֆիզիկական անձինք:

Իսկ որպես պատասխանող գործերից 9-ով հանդես է եկել միայն ԱՍՀ նախարարությունը, 27 դեպքում՝ նախարարության Սոցիալական ապահովության ծառայությունը (ՍԱԾ), իսկ 2 դեպքում՝ ԱՍՀ նախարարությունը և ՍԱԾ-ը¹/ՍԱԾ-ի տարածքային բաժինը²: 2 դեպքում տեղի է ունեցել ոչ պատշաճ պատասխանողի փոփոխություն: Մեկ դեպքում ներկայացված հայցում որպես պատասխանող նշված էր նաև կենսաթոշակային վարչությունը և դրա պետը, դատարանը փոխարինել է պատշաճ պատասխանող ԱՍՀ նախարարությունով³, իսկ մյուս դեպքում Դատարանը արձանագրային որոշմամբ որոշել է ոչ պատշաճ պատասխանող ՀՀ ԱՍՀ նախարարության ՍԱԾ աշխատակազմի սոցիալական ապահովության տարածքային բաժնին փոխարինել ՍԱԾ-ով⁴:

Գործերից 36-ով (90%) ներգրավվել է երրորդ անձ՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը, որից 29-ը դեպքում՝ դատարանի նախաձեռնությամբ, իսկ 7-ով՝ իր դիմումի համաձայն: Առանց ՀՀ ֆինանսների նախարարությունը որպես երրորդ անձ ներգրավելու 4 գործերից 2-ը վերաբերել են երեխայի ծննդյան նպաստների տրամադրմանը⁵, իսկ 2-ը՝ կենսաթոշակի վերահաշվարկին⁶: Նշված 4 գործից 2-ը մերժվել են, մեկը բավարարվել է ամբողջությամբ, իսկ մյուսը՝ մասնակի: 3-րդ անձ ներգրավելու մասին առանձին որոշումը 36 գործերից հասանելի է դատալեքսում միայն 25-ով: Հատկանշական է, որ գործերի մեծամասնության դեպքում՝ 25 գործով, 3-րդ անձը չի մասնակցել գործի քննությանը, իսկ 17 գործով՝ անգամ դիրքորոշում չի հայտնել:

Դիտարկված գործերից 23-ի (58%) դեպքում հայցվորն ունեցել է փաստաբան ներկայացուցիչ, սակայն 5 գործով ներկայացուցիչ՝ փաստաբան լինելու մասին վճռում նշում չկա, 2 դեպքում՝ այլ տեսակի ներկայացուցիչ, իսկ 15 գործով (38%)՝ ներկայացուցիչ չի ունեցել: Դրանցից 12-ը վերաբերել են կենսաթոշակի վերահաշվարկին, 1-ը՝ կենսաթոշակի նշանակմանը, 1-ը՝ աշխատանքային ստաժի հաշվարկին, իսկ 1-ը՝ երեխայի ծննդյան համար տրվող նպաստին: Հատկանշական է, որ նշված 15 գործերով հայցերից 11-ը բավարարվել է ամբողջությամբ կամ մասնակի:

¹ Մեկ գործով գործով նախնական դատական նիստին դատարանը արձանագրային որոշմամբ որոշել է՝ Հայաստանի Հանրապետության Սոցիալական ապահովության ծառայությանը ներգրավել սույն վարչական գործով որպես երկրորդ պատասխանող: ՎԴ/5158/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809935362;

² ՎԴ/4046/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809934140


³ ՎԴ/8119/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809938508

⁴ ՎԴ1/0042/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809932491

⁵ ՎԴ/0759/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809930624; ՎԴ/4242/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809934323

⁶ ՎԴ/9349/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809939780, ՎԴ/8119/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809938508

Դիտարկված գործերից 28-ով (70%) հայցվորը կամ նրա ներկայացուցիչը ներկա են գտնվել գործի քննությանը, 3 գործով գործը քննվել է գրավոր ընթացակարգով⁷, իսկ մնացած դեպքերում՝ կամ չի մասնակցել (6 գործ) կամ դրա մասին նշում առկա չէ (3 գործ):



Դիտարկված 40 գործից միայն 14-ում (35%) պատասխանողը ներկա է գտնվել գործի քննությանը, 3 գործ քննվել է գրավոր ընթացակարգով, 21 դեպքում պատասխանողը/ներկայացուցիչը/ ներկա չի գտնվել գործի քննությանը, իսկ 2 գործով վճռում նշում առկա չէ պատասխանողի մասնակցության մասին:

3 գործով դատարանը գործի քննությունն իրականացրել է պատշաճ ծանուցված կողմերի բացակայությամբ: Նշված գործերից մեկը վերաբերել է տարիքային աշխատանքային կենսաթոշակի նշանակման⁸, իսկ երկուսը՝ կենսաթոշակի վերահաշվարկի, պակաս վճարածը վճարելու խնդրին⁹: Նշված գործերից 2-ով հայցն ամբողջությամբ բավարարվել է, իսկ 1-ով՝ մերժվել:


Դիտարկված գործերից 34-ով¹⁰ (դիտարկված գործերի 83%-ը) պատասխանողը ներկայացրել է որևէ տեսակի առարկություն, մասնավորապես, 25 գործով՝ գրավոր առարկություն, 6 գործով՝ հայցադիմումի պատասխան, իսկ 2 գործով՝ միայն բանավոր առարկություն: Մեկ այլ գործով առարկություն է ներկայացրել երկրորդ պատասխանողը: 15 գործով պատասխանողը ներկա չի գտնվել դատաքննությանը, սակայն ներկայացրել է գրավոր առարկություն կամ հայցադիմումի պատասխան:

Գործերից 4-ով տեղի է ունեցել դատավորի փոփոխություն: 2 դեպքում դատավորի ինքնաբացարկի հիման վրա¹¹՝ նույն դատավորի կողմից (նշված գործերով հայցվորները

⁷ ՎԴ/1/0119/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809940472, ՎԴ/11058/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809941482, ՎԴ/4203/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809934368
⁸ ՎԴ/4843/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809935025
⁹ ՎԴ/1394/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809931302, ՎԴ/4046/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809934140
¹⁰ Մի դեպքում առարկություն ներկայացրել է միայն երկրորդ պատասխանողը՝ ՎԴ/5158/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809935362
¹¹ ՎԴ/4671/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809934839, ՎԴ/7736/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809938104

նախկինում դատավոր են եղել, որից մեկը՝ ազգակցական կապ է ունեցել դատավորի հետ), իսկ 2 դեպքում՝ հայցադիմումը վերադարձվելուց հետո կրկին է ներկայացվել, սակայն մակագրվել է այլ դատավորի:

Դիտարկված գործերից 15-ով (38%) հայցադիմումը վերադարձվել է, ընդ որում՝ 2 գործով վերադարձվել է երկու անգամ: Հատկանշական է, որ 15 գործերից 11-ի դեպքում հայցվորը եղել է ներկայացված փաստաբանով: Վերադարձի պատճառ է եղել հայցադիմումին կից պահանջվող փաստաթղթերը չներկայացնելը, հայցի հիմքի, առարկայի, տեսակի փոփոխման կամ լրացման վերաբերյալ մատնանշում կատարելը, ինչպես նաև բացթողնված ժամկետը հարգելի ճանաչելու միջնորդություն չներկայացնելը:




4 գործով Հայցվորը ներկայացրել է բաց թողնված ժամկետը հարգելի համարելու միջնորդություն, որից 3-ը բավարարվել է, իսկ 1-ը թողնվել է առանց քննության: Բավարարելու դեպքում դատարանը հարգելի պատճառ մեկ գործով է համարել այն հանգամանքը, որ հայցվորը գտնվել է բժիշկների դինամիկ հսկողության տակ, և վերջիններս թույլ չեն տվել այդ ընթացքում հայց ներկայացնել¹²: Մյուս դեպքում հայցվորը նախ հայցը ներկայացրել էր Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան, սակայն վերջինս հայցի ընդունումը մերժել էր և իրազեկել, որ գործն ընդդատյա է Վարչական դատարանին: Ըստ այդմ, հաշվի առնելով մինչև հայցադիմումը ներկայացնելը ի պաշտպանություն իր օրինական շահերի հայցվորի ձեռնարկած գործողությունները՝ Դատարանը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված մեկամսյա ժամկետի բացթողումն համարել է հարգելի¹³: Երրորդ գործով հայցվորը դատարան ներկայացված միջնորդության մեջ նշել է, որ ի սկզբանե վիճարկման հայցատեսակով է դիմել դատարան՝ պահպանելով դրա համար նախատեսված ժամկետը, իսկ դատարանի կողմից հայցադիմումը վերադարձվել է, դատարանը մատնանշել է հայցվորին իր ենթադրյալ խախտված իրավունքների դատական կարգով վերականգնումն իրականացնել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածով սահմանված

¹² ՎԴ/0192/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809929948
¹³ ՎԴ/3208/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809933272

գործողության կատարման հայցատեսակին համահունչ հայցադիմում, հայցվորը փոփոխել է հայցատեսակը՝ դարձնելով այն գործողության կատարման հայց, և խնդրել է հարգելի ճանաչել հայցադիմում ներկայացնելու ժամկետի հաշվարկը՝ հաշվի առնելով, որ ի սկզբանե հայցը ներկայացվել է այլ հայցատեսակով, որի համար նախատեսված ժամկետն իր կողմից եղել է պահպանված: Դատարանը բավարարել է միջնորդությունը՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ հայցվորը հայցատեսակը փոփոխել է դատարանի մատնանշմամբ, թե՛ սկզբնական, և թե՛ կրկին ներկայացված հայցադիմումներով դիմելով դատական պաշտանության՝ հետապնդում էր միևնույն վերջնական նպատակը, որպեսզի չսահմանափակվի անձի դատական պաշտպանության իրավունքը և ապահովվի այդ իրավունքի գերակայությունը¹⁴: Մեկ միջնորդություն դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելիս քննության չի առել, քանի որ այդ պահի դրությամբ ժամկետի բաց թողնում չի ֆիքսել¹⁵:

4 գործով ներկայացվել է պետական տուրքի վճարումը հետաձգելու, իսկ 1 գործով՝ հետաձգելու կամ ազատելու միջնորդություն: Բոլոր 5 գործով էլ պետական տուրքի վճարումը հետաձգելու միջնորդությունը բավարարվել է: Որպես հետաձգման հիմնավորում նշվել է հայցվորի կենսաթոշակառու լինելը, այլ եկամուտ չունենալը, անձի արդարադատության մատչելիության ապահովման սկզբունքը/դատական պաշտպանության իրավունքը: Մեկ գործով չնայած, որ հայցվորը չի ներկայացրել իր գույքային դրության վերաբերյալ որևէ ապացույց, այնուամենայնիվ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայցվորը տարիքային աշխատանքային կենսաթոշակի նշանակման մերժմամբ զրկվել է համապատասխան պետական աջակցությունից, Դատարանը եզրակացրել է, որ պետական տուրքի վճարման ժամկետը հետաձգելու մասով հայցվորի միջնորդությունը ենթակա է բավարարման:

Դիտարկված գործերի մեծամասնության դեպքում՝ 22 գործ (գործերի 55%-ը) նշանակվել է 3-4 նիստ, ներառյալ վճռի հրապարակումը, 16 գործով՝ 4-5 նիստ, 6 գործով՝ 5-ից ավելի նիստ:




Դիտարկված գործերով 11 նիստ չի կայացել, դրանցից 5-ը՝ կորոնավիրուսի կանխարգելման նպատակով արտակարգ դրությամբ պայմանավորված սահմանափակումների պատճառով, 1

¹⁴ ՎԴ/4242/05/19 http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809934323
¹⁵ ՎԴ1/0036/05/19 http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809932394

գործով՝ դատարանների մուտքերն ու ելքերը արգելափակված լինելու պատճառով, 1 գործով՝ դատավորի ԲԴԽ-ում հարցազրույցի հրավիրված լինելու կապակցությամբ, 1 գործով՝ նիստի օրը Կառավարության որոշմամբ աշխատանքային օրը տեղափոխելու, 1 գործով՝ նախորդ դատական նիստն ուշ ավարտելու կապակցությամբ:

Գործով քննությունը վարույթ ընդունելուց մինչև վճռի հրապարակելը գործերից 6-ի դեպքում տևել է մինչև 3 ամիս, 17 գործով՝ 4-6 ամիս, 17 գործով՝ 7 ամսից մինչև մեկ տարի: Մինչև մեկ տարի տևողությամբ գործերից 16-ը վերաբերել են կենսաթոշակի նշանակմանը կամ վերահաշվարկին և չվճարված մասի վճարմանը, իսկ 1-ը՝ երեխայի նպաստ վճարելուն: Արդյունքում ստացվում է, որ մինչև մեկ տարի տևող դատավարության ընթացքում կենսաթոշակառուն չի ստանում կենսաթոշակը, և վճռից հետո այն ավտոմատ չի վճարվում, կենսաթոշակառուները նորից ստիպված են լինում վնասների հատուցման համար դիմել:



Գործերից 3-ով գործի քննության ընթացքում կայացվել է գրավոր դատաքննություն անելու մասին որոշում¹⁶: Նշված երեք գործերից 1-ով հայրը մերժվել է, 1-ով բավարարվել է ամբողջությամբ, իսկ 1-ով՝ մասնակի: Նշված գործերով նման որոշում կայացվել է 2020թ. ապրիլին, իսկ այդ որոշմանը նախորդող նիստը կորոնավիրուսի վարակի կանխարգելման նպատակով չի կայացել:

Դիտարկված 40 գործերից 14-ով (գործերի 35%-ը) դատարանը հայրը վարույթ ընդունելիս պահանջել է վարչական վարույթի նյութերը:


Գործի քննության ընթացքում դատարանը 5 գործով պահանջել է ապացույցներ: Դատարանը պահանջել է վարչական վարույթի նյութերը (2 գործով), արխիվից և/կամ գործատուից հայցվորի աշխատանքային գործունեության առնչվող նյութեր (3 գործով):

¹⁶ ՎԴ/4203/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809934368, ՎԴ/1/0119/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809940472, ՎԴ/11058/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809941482

Դիտարկված գործերից 3-ով պատասխանողը չի ներկայացրել իր փաստարկները հիմնավորող ապացույցներ¹⁷: Նշված 3 գործով էլ դատարանն ամբողջությամբ բավարարել է հայցը: Իսկ հայցվորի վկայակոչած փաստերը հիմնավորող ապացույց չի ներկայացվել 3 գործով, երեքն էլ մերժվել են:

Գործերից 5-ով հրավիրվել են վկաներ:

Գործերից 27-ով վճռում վկայակոչվել է ՀՀ սահմանադրությունը, 17-ով Սահմանադրական դատարանի որոշումները, 12-ով՝ Վճռաբեկ դատարանի որոշումները, 10-ով՝ ՄԻԵԴ վճիռները, 8-ով՝ միջազգային պայմանագրերը:



Գործերից միայն 6-ով պահանջվել է ներկայացուցչի ծախսի հատուցում, որը 5 դեպքում բավարարվել է¹⁸: Դատարանի կողմից բավարարված այս տեսակի դատական ծախսի 5 գործով ընդհանուր գումարը կազմել է 360 000 ՀՀ դրամ:

Դիտարկված գործերից 26-ը (65%-ը) բողոքարկվել են վերաքննության կարգով, որից 15-ը պատասխանողի կողմից (կենսաթոշակի նշանակման, (վերա)հաշվարկին վերաբերող գործեր), ևս 3-ը և՛ պատասխանողի, և՛ երրորդ անձի (կենսաթոշակի (վերա)հաշվարկին վերաբերող գործեր), 1-ը՝ միայն երրորդ անձի (կենսաթոշակի վերահաշվարկին վերաբերող), իսկ 7-ը՝ հայցվորի կողմից (կենսաթոշակի (վերա)հաշվարկին, երեխայի նպաստի վճարմանը վերաբերող գործեր):

II. Դատական պրակտիկայի առանձնահատկություններ

¹⁷ ՎԴ2/0138/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809934428, ՎԴ/9021/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809939481, ՎԴ5/0188/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809941150

¹⁸ 6-րդ գործով հայցը մերժվել է, ուստի մերժվել է նաև այցվորի կողմից իրավաբանական ծառայության համար կատարված ծախսի փոխհատուցման պահանջը:

Պետական տուրքի գանձում

Հատկանշական է, որ գործը քննող դատավորների կողմից չի դրսևորվել միանման մոտեցում կենսաթոշակի վճարման պարտավորեցման և երեխայի նպաստի հետ կապված գործերով հայցվորի՝ պետական տուրքի վճարումից ազատված լինելու հարցում: Ավելին, երեխայի նպաստի վճարման հետ կապված նույն դատավորի կողմից քննված երկու գործերից մեկով դատավորը համարել է, որ հայցվորը պետական տուրքից ազատված է, իսկ մյուսով՝ ոչ¹⁹: Արդյունքում հայցվորների մի մասը ստիպված է եղել վճարել պետական տուրք, իսկ մյուսը՝ ոչ:

Այդպես, դիտարկված գործերից 4-ով (դիտարկված գործերի 10%-ով) դատարանը համարել է, որ հայցվորը եղել է պետական տուրքը վճարելուց օրենքով ազատված: Նշված գործերով քննարկվել է երեխայի նպաստի (2 գործ)²⁰, աշխատանքային ստաժի, որը պետք է ներառվեր կենսաթոշակի հաշվարկի մեջ²¹ (1 գործ), և կենսաթոշակի (վերա)հաշվարկի²² (1 գործ) հարցեր:

Աշխատանքային ստաժի և կենսաթոշակի վերահաշվարկի հետ կապված երկու գործերով դատարանը՝ նախագահությամբ դատավոր Արծրուն Միրզոյանի գտել է, որ հաշվի առնելով այն, որ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի համաձայն՝ դատարաններում պետական տուրքի վճարումից ազատվում են հայցվորները՝ աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների հետ կապված այլ գումարների գանձման և աշխատանքային վեճերի վերաբերյալ հայցերով, իսկ տվյալ դեպքում կենսաթոշակն ըստ էության հանդիսանում է աշխատավարձին հավասարեցված վճարում, ուստի կենսաթոշակը վճարելուն պարտավորեցնելու վերաբերյալ հայցապահանջը դատարան ներկայացնելիս հայցվորն ազատված է եղել պետական տուրքի վճարման պարտականությունից²³: Հատկանշական է, որ երկու գործով էլ հայցվորը ներկայացուցիչ չի ունեցել:

Դիտարկված գործերից 35-ով հայցվորը ներկայացրել է կենսաթոշակը վճարելուն պարտավորեցնելու վերաբերյալ հայցապահանջը²⁴, սակայն նշված գործերը քննող

¹⁹ ՎԴ/7797/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809938174; ՎԴ/4866/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809935051

²⁰ ՎԴ/0759/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809930624; ՎԴ/9171/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809939625

²¹ ՎԴ/4866/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809935051

²² ՎԴ/7797/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809938174

²³ Հատկանշական է, որ գործերից մեկով վճիռը բողոքարկվել է հայցվորի կողմից, Վերաքննիչ վարչական դատարանը բավարար է բողոքը, իսկ պետական տուրքի կապակցությամբ նշել է, որ Հայցվորի կողմից նախապես վճարվել է պետական տուրքի գումար 8000 ՀՀ դրամ հայցադիմում ներկայացնելու համար, ուստի նշված ծախսը հատուցելու պարտականությունը պետք է դրվի գործով պատասխանողի վրա: Տե՛ս ավելին

http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809935051

²⁴ ՎԴ/4078/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809934201

դատավորները, բացի մեկ դատավորից, համարել են, որ հայցվորն ազատված չէ պետական տուրքի վճարումից:

Այն գործերով, որոնց շրջանակում բարձրաձայնվել է պետական նպաստ հանդիսացող ծննդյան միանվագ նպաստ տրամադրելուն պարտավորեցնելը, երկու դատավոր համարել են, որ հայցվորն ազատված է պետական տուրքը վճարելուց: Նշված երկու դեպքում էլ հայցվորը ներկայացված է եղել փաստաբանի կողմից: Գործերից մեկով դատարանը նշել է, որ այն գործերով, որոնք ներառում է մերժելու մասին վարչական ակտի անվավեր ճանաչելու պահանջ, դատարանը գտել է, որ «Պետական տուրքի մասին» ՀՀ 22-րդ հոդվածի «իդ» ենթակետի հիմքով Հայցվորն ազատված է պետական տուրքի վճարումից, այդ պահանջով Դատարան դիմելիս պետական տուրքի գծով ծախսի կատարում անհրաժեշտ չէր²⁵, իսկ մյուսով՝ պարզապես նշվել է, որ պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված, քանի որ հայցը մերժվում, իսկ հայցվորը չի վճարել պետական տուրքի գումարը՝ պետական տուրքի վճարումից ազատված լինելու հիմքով²⁶: Նպաստի վերաբերյալ դիտարկված երկու այլ գործով դատարանը չի համարել, որ հայցվորը պետք է ազատված լինի պետական տուրքի վճարումից, դրանցից մեկը²⁷ քննվել է պարտավորեցման հայցի շրջանակներում, ինչպես և վերը նշված երկու գործը, իսկ մյուսը՝ գործողության կատարման²⁸:

III. Վարչարարության խնդիրներ

Դիտարկված գործերից 12-ով Դատարանն արձանագրել է, որ վարչական ակտում այն ընդունելու փաստական և իրավական հիմքերը (պատշաճ կերպ) ներառված և պատճառաբանված չեն եղել:

Դիտարկված գործերից 20-ով դատարանն արձանագրել է, որ վարչական մարմնի կողմից փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկում չի իրականացվել:

3.1 Կենսաթոշակի նշանակման կամ (վերա)հաշվարկման վերաբերյալ գործեր

➤ Դատավորների կենսաթոշակի (վերա)հաշվարկ

Կենսաթոշակի (վերա)հաշվարկին վերաբերող բավարարված 32 հայցերից 8-ը վերաբերել են դատավորին նշանակված կենսաթոշակի վերահաշվարկ կատարելուն: ԱՍՀ նախարարությունը կենսաթոշակի չափի հաշվարկի համար հիմք է ընդունել 2014 թվականի մայիս ամսվա աշխատավարձը՝ «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման,

²⁵ ՎԴ/0759/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809930624

²⁶ ՎԴ/9171/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809939625

²⁷ ՎԴ/5841/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809936082

²⁸ ՎԴ/4242/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809934323

սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ պարբերության հղում անելով, որի համաձայն՝ կենսաթոշակի չափը հաշվարկվում է մինչև օրենքն ուժի մեջ մտնելը (մինչև 2014 թվականի հուլիսի 1-ը) դատավորի զբաղեցրած վերջին պաշտոնի համար ստացած աշխատավարձի (պաշտոնային դրույքաչափի և դրա նկատմամբ սահմանված հավելավճարի հանրագումարի) գումարի և զրո ամբողջ ինը տասնորդական գործակցի արտադրյալի 55 տոկոսի չափով: Այդ գործերով դատարանը գտել է, որ դատավորի կենսաթոշակի չափը հաշվարկելիս մինչև օրենքի ուժի մեջ մտնելը, այն է մինչև 01.07.2014 թվականը որպես դատավոր զբաղեցրած վերջին պաշտոնի համար ստացած աշխատավարձը պետք է հաշվարկային հիմք ընդունվի միայն այն դեպքում, եթե այդ աշխատավարձի հիմքով հաշվարկված կենսաթոշակի չափն ավելի մեծ է, քան «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքով սահմանված աշխատավարձի հիմքով հաշվարկված կենսաթոշակի չափը: Հակառակ պարագայում հայցվորի կենսաթոշակի չափը հաշվարկելիս հայցվորի՝ մինչև 01.07.2014 թվականն ստացած աշխատավարձը հաշվարկային հիմք ընդունելու դեպքում «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասի նորմը կկիրառվի ՀՀ Սահմանադրությանը հակասող բովանդակությամբ ու մեկնաբանությամբ: Դատարանը գտել է, որ հայցվորի թոշակը ենթակա է վերահաշվարկման Օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասով՝ սահմանված կենսաթոշակի չափի հաշվարկման բանաձևում հաշվարկային հիմք ընդունելով «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքով սահմանված աշխատավարձը՝ հայցվորի որպես դատավոր պաշտոնավարման վերջին ամսվա աշխատավարձը: Դատարանն արձանագրել է, որ Ծառայությունը պարտավոր էր հայցվորին կենսաթոշակ նշանակելիս, այնուհետև նաև վերահաշվարկելու դիմումը քննարկելիս առաջնորդվել Սահմանադրական դատարանի թիվ ՄԴՈ-1302 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումներով:

Նշված գործերից մեկով²⁹ մինչ 2014 թ. հայցվորի աշխատավարձը եղել է ավելի ցածր, քան իր աշխատավարձը 2018թ., սակայն կենսաթոշակ նշանակելիս հիմք է ընդունվել 2014թ. աշխատավարձը: Դատարանը, հաշվի առնելով ՀՀ սահմանադրական դատարանի ՄԴՈ-1302 որոշման մեջ ամրագրված իրավական դիրքորոշումները, նաև «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի շրջանակներում կատարված վերլուծությունները, գտել է, որ Օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա Հայցվորի կենսաթոշակի չափը հաշվարկելիս հաշվարկման հիմք պետք է ընդունվի «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքով սահմանված դատավորի պաշտոնում պաշտոնավարման վերջին ամսվա (2018 թվականի դեկտեմբեր ամսվա) աշխատավարձը: Հակառակ պարագայում չեն իրացվի ՀՀ սահմանադրական դատարանի ՄԴՈ-1302 որոշման մեջ ամրագրված իրավական դիրքորոշումները: Ավելին, Հայցվորի կենսաթոշակի չափը հաշվարկելիս Հայցվորի՝ մինչև 01.07.2014 թվականը ստացած

²⁹ ՎԴ5/0060/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809931844

աշխատավարձը հաշվարկային հիմք ընդունելու դեպքում Օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասի նորմը կկիրառվի ՀՀ Սահմանադրությանը հակասող բովանդակությամբ ու մեկնաբանությամբ, մինչդեռ ՀՀ սահմանադրական դատարանի մեկնաբանությունը, ինչպես այլ իրավական դիրքորոշումները, պարտադիր են բոլոր պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց համար՝ ՀՀ ամբողջ տարածքում:

➤ *Կասեցված կենսաթոշակի վերաակտիվացում՝ առանց հավելյալ աշխատանքային փորձը հաշվի առնելու*

Դիտարկված գործերից մեկով³⁰ հայցվորը սկսել էր ստանալ կենսաթոշակ, սակայն որոշակի ժամանակ անց կրկին անցել է աշխատանքի, կենսաթոշակ վճարելը կասեցվել էր, իսկ երբ հայցվորը կրկին անցել էր թոշակի, նրա կենսաթոշակի չափը մնացել էր նույնը՝ առանց հաշվի առնելու հավելյալ աշխատանքային փորձը: Հաշվի առնելով, որ հայցվորին կենսաթոշակը նշանակվել է մինչև «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (Օրենքի) ուժի մեջ մտնելը, և դրանից հետո հայցվորը նշանակվել է դատախազի պաշտոնում, Դատարանը գտել է, որ հայցվորի նկատմամբ կիրառելի էր ոչ թե Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասը, այլ Օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասը, և վերջինիս կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցվել է Օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասի ուժով:

Դատարանը գտել է, որ այն դեպքերում, երբ անձի կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցվել է Օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասի հիմքով՝ եթե պետական պաշտոն զբաղեցրած անձը կենսաթոշակ նշանակվելուց հետո անցել է զինվորական ծառայության, նշանակվել է քրեակատարողական ծառայողի, դատական ակտերի հարկադիր կատարողի, դատախազի, քննչական կոմիտեի ծառայողի, հատուկ քննչական ծառայության ծառայողի կամ դատավորի պաշտոնում, այդ հիմքի վերանալուց հետո վերջինիս կենսաթոշակը ենթակա է վերահաշվարկման՝ կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցնելուց հետո ձեռք բերած մասնագիտական ստաժի հաշվառմամբ՝ ՀՀ կառավարության 28.08.2014 թվականի թիվ 895-Ն որոշմամբ հաստատված կենսաթոշակ, թաղման նպաստ նշանակելու և վճարելու կարգի 21-րդ կետի հիման վրա: Ավելին, Դատարանը հերքել է պատասխանողի փաստարկները՝ Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերի և ՀՀ կառավարության 28.08.2014 թվականի թիվ 895-Ն որոշմամբ հաստատված կենսաթոշակ, թաղման նպաստ նշանակելու և վճարելու կարգի 22-րդ կետի կիրառման վերաբերյալ:

➤ *Աշխատանքային ստաժի հաշվարկ*

Գործերից մեկով աշխատանքային գրքույկի լրացման կարգում խախտման առկայության դեպքում Պատասխանողը չի հաշվարկել խնդրո առարկա աշխատանքային փորձը

³⁰ ՎԴ/4203/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809934368

կենսաթոշակի հաշվարկի մեջ: Դատարանը գտել է, որ Հայցվորի վկայակոչած փաստը կասկածի տակ դնելու համար առնվազն պետք է հաստատվեր, որ նշված ժամանակահատվածում նշված վայրում աշխատելու վերաբերյալ գրառումներն արժանահավատ չեն, սակայն վարչական մարմինն այդպիսի ապացույցներ ձեռք չի բերել, իսկ փաստաթղթերի կամ տեղեկությունների պահպանման համար նախատեսված վայրերում տվյալների բացակայությունը չի կարող վկայել տվյալների անարժանահավատության մասին³¹:

Գործերից մեկով³² Պատասխանող կողմը մերժել է երկարամյա ծառայության կենսաթոշակ նշանակելը՝ պատճառաբանելով, որ հայցվորը պահանջվող աշխատանքային ստաժ չունի, քանի որ տեղեկատվական շտեմարաններում առկա տվյալների համաձայն, նշված կազմակերպությունների կողմից խնդրո առարկա ժամանակահատվածում սոցիալական վճարումներ, իսկ 2013 թվականի հունվարի 1-ից հետո եկամտային հարկի վճարումներ չեն կատարվել: Սակայն Հայցվորի աշխատանքային գրքույկում առկա են գրառումներ մինչև 2013 թվականի հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածի աշխատանքային ստաժի վերաբերյալ: Ընդ որում, աշխատանքային գրքույկում ջնջումներ, սխալ և ոչ հստակ գրառումներ առկա չեն: Դատարանի գնահատմամբ այս պայմաններում աշխատանքային ստաժի առկայությունը կասկածի տակ դնելու համար առնվազն պետք է հաստատվեր, որ աշխատանքային գրքույկի մինչև 2013 թվականի հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածի վերաբերյալ գրառումներն արժանահավատ չեն, սակայն վարչական մարմինն այդ գրառումների արժանահավատությունը հերքող ապացույցներ ձեռք չի բերել: Ինչ վերաբերում է տեղեկատվական շտեմարանում տվյալների բացակայությանը, ապա այդ փաստը չէր կարող հիմք հանդիսանալ աշխատանքային գրքույկի գրառումների արժանահավատությունը կասկածի տակ դնելու համար: Դատարանն արձանագրել է, որ Հայցվորը ներկայացրել է իր տիրապետության տակ գտնվող ապացույցները, որոնցով կարող էր հաստատել իր աշխատանքային ստաժը, իսկ կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումը Հայցվորի ներկայացրած տեղեկությունները հերքող ապացույցների բացակայության պայմաններում մինչև 2013 թվականի հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածի ստաժը չի հաշվարկել: Սակայն ստեղծված իրավիճակում վարչական մարմինը պետք է առաջնորդվեր Հայցվորի ներկայացրած փաստերի հավաստիության կանխավարկածով և դրանք հաստատված համարեր:

➤ *Արտադատական կարգով կենսաթոշակի նվազեցում*

Դիտարկված գործերից մեկով³³ Դատարանը նշել է, որ կենսաթոշակն անձի սեփականությունն է, որի ծավալի մեջ է մտնում դրա ամբողջ չափը, հետևաբար ՍԱԾ-ի կողմից անձին արդեն իսկ նշանակված կենսաթոշակի չափի նվազեցմանն ուղղված վերահաշվարկն առանց դատական

³¹ՎԴ2/0063/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809931393

³² ՎԴ2/0138/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809934428

³³ՎԴ/4671/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809934839

կարգի պահպանման իրենից ներկայացնում է պակասեցված գումարի մասով սեփականության իրավունքից զրկում: Դատարանը նշել է, որ Ծառայությունն անձին կենսաթոշակ նշանակելու իր լիազորությունն իրացնելուց հետո այլևս իրավասու չէ նվազեցնել նշանակված կենսաթոշակի չափը: Այն դեպքում, երբ Ծառայությունը կենսաթոշակը նշանակելուց հետո գտնում է, որ կենսաթոշակի չափն օրենքով սահմանվածից ավել է հաշվարկել, այն կարող է նվազեցնել բացառապես դատական կարգով՝ անկախ այն հանգամանքից, թե կենսաթոշակի սխալ հաշվարկման պատճառը որն է եղել: Այսինքն՝ տվյալ դեպքում Ծառայությունը պետք է համապատասխան հիմքերի առկայության դեպքում դիմեր դատարան՝ խնդրելով նվազեցնել անձի նկատմամբ նշանակված կենսաթոշակի չափը: Մինչդեռ վերջինս իր իսկ գրությամբ է նվազեցրել հայցվորին նշանակված կենսաթոշակի չափը, ինչի արդյունքում խախտել է կենսաթոշակի նվազեցման՝ որպես սեփականությունից զրկման համար ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված կարգը:

Այս համատեքստում Դատարանը հիշեցրել է, որ անձը կարող է զրկվել ՀՀ սահմանադրությամբ սեփականության իրավունքից բացառությամբ դատական կարգով՝ օրենքով նախատեսված դեպքերի: ՀՀ Սահմանադրական դատարանի 04.10.2016թ. թիվ ՄԴՈ-649 որոշմամբ արձանագրել է, որ կենսաթոշակի վճարումը գործնականում սեփականությունը սեփականատիրոջը փոխանցելու միջոց է: Միաժամանակ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (ՄԻԵԴ) տվել է Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի իմաստով «սեփականություն» հասկացության ընդլայնված մեկնաբանություն՝ օգտագործելով «օրինական սպասելիք» հասկացությունը: Մասնավորապես՝ ՄԻԵԴ-ն արձանագրել է, որ պահանջի իրավունքը ստանում է «սեփականություն» որակումն այն պահից, երբ անձն ունենում է «օրինական սպասելիք» իր իրավունքներն իրականացնելու համար (տե՛ս «Պրեստո Կոմպանիա Նավիեռա ՍԱ»-ն և այլոք ընդդեմ Բելգիայի գործով 20.11.1995թ. վճիռը): ՀՀ վճռաբեկ դատարանը ևս, հիմք ընդունելով ՀՀ սահմանադրական դատարանի, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումների արտահայտված իրավական դիրքորոշումները, արձանագրել է, որ կենսաթոշակի իրավունքը Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով պաշտպանվող գույքային իրավունք է (տե՛ս թիվ ՎԴ/5086/05/09 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2010թ. որոշումը):

3.2 Երեխայի ծննդյան նպաստի վերաբերյալ գործեր

Նշված հարցերի վերաբերյալ դիտարկված գործերով հիմնականում բարձրացվել են երեխայի կարգաթիվը որոշելու, այդ թվում՝ մահացած երեխաների առկայության պայմաններում, ժամանակին գումարը չպահանջելու, ինչպես նաև հորը նպաստը տալու հարցեր:

Այդպես, Դատարանը հաստատել է, որ նպաստի համար կարող է դիմել ծնողներից յուրաքանչյուրը, այլ ոչ թե միայն մայրը: Այս առումով գործերից մեկով³⁴ դատարանը

³⁴ ՎԴ/0759/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809930624

վկայակոչել է նաև ՀՀ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումը առ այն, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 06.03.2014 թվականի՝ «Երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափը սահմանելու, երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակելու և վճարելու կարգը հաստատելու մասին» թիվ 275-Ն որոշման Հավելված N 1-ի 8-րդ կետի 3-րդ ենթակետի «բ» պարբերությունը 15.01.2019 թվականի ՍԴՈ-1438 որոշմամբ ճանաչել է ՀՀ Սահմանադրության 29-րդ հոդվածին, 35-րդ և 37-րդ հոդվածների 2-րդ մասերին հակասող և անվավեր: ՀՀ սահմանադրական դատարանն ընդգծել է, որ երեխայի լավագույն շահերի առավել ապահովման նպատակով, մինչև վիճարկվող դրույթը սույն [ՍԴՈ-1438] որոշման պահանջներին համապատասխանեցնելը, իրավակիրառ պրակտիկան պետք է առաջնորդվի այնպիսի մոտեցմամբ, որ որևէ էական տարբերություն չպետք է լինի այն հարցում, թե նոր ծնված երեխայի հորից սերված երեխաների խնամքը հոր կողմից իրականացվել է դատարանի որոշմամբ, թե երեխայի մոր հետ փոխադարձ համաձայնությամբ:

Ավելին, Դատարանն արձանագրել է, որ վարչական գործում առկա չէ ապացույց առ այն, որ նախքան դիմումի մերժումը, վարչական մարմինը ձեռնարկել է օրենսդրությամբ նախատեսված քայլեր՝ դիմումատուի կողմից ներկայացված տվյալների հավաստիությունը ճշտելու համար, մասնավորապես պարզելու այն հարցը, թե ծնողներից ում մոտ են գտնվում երեխաները և ով է հոգ տանում նրանց մասին: Դեռ ավելին, դատարանը նկատել է, որ վարչական մարմինը դիմումը մերժելու հիմքում դրել է Կարգի 8-րդ կետի 3-րդ ենթակետի «բ» պարբերությունը, իսկ Դատարան ներկայացրած «Առարկություն» վերտառությամբ փաստաթղթում նշել է, որ դիմումը մերժվել է Կարգի 8-րդ կետի 3-րդ ենթակետի «դ» պարբերության հիմքով:

Նշված խնդրի շուրջ մերժված հայցերից մեկով³⁵ դատարանը հաստատել է ՍԱԾ-ի մոտեցումն առ այն, որ եթե օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգով ու ժամկետներում ծնողները չեն ստանում իրենց անվամբ փոխանցված նպաստը, ապա այն վերադարձվում է պետությանը՝ առանց հետ ստանալու հնարավորության:

IV. Կարճման որոշումներ

Ուսումնասիրության շրջանակներում դիտարկվել է կարճված 9 գործ:

Հայցերը վերաբերել են հետևյալ խնդիրներին՝

- աշխատանքային վեճ,
- աշխատանքային գրքույկում ուղղում կատարելը,
- մայրության նպաստի նշանակում,
- նյութական վնասի հատուցում,

³⁵ ՎԴ/4242/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809934323

- վարչարարությամբ պատճառված վնաս,
- կենսաթոշակի նշանակում կամ վերահաշվարկ,
- ժառանգություն ստացած ավանդի փոխհատուցում,
- նպաստի նշանակում:

6 գործով հայցվորն ունեցել է փաստաբան ներկայացուցիչ, իսկ մնացած 3 գործով որևէ ներկայացուցիչ չի ունեցել:

4 գործով հայցադիմումը վերադարձված է եղել՝ հայցադիմումին կից պահանջվող փաստաթղթերը չլցվելու կամ/և հայցի հիմքը կամ առարկան փոփոխելու մատնանշում է արվել:

4 գործով ներկայացվել է բաց թողնված ժամկետը հարգելի համարելու միջնորդություն, որից 2-ը թողնվել է դատական նիստում քննության, 1-ը՝ բավարարվել է, իսկ 1-ը՝ թողնվել է առանց քննության:

Դիտարկված 8 գործերով կայացել է 0-ից 4 նիստ, իսկ մեկով՝ 5-ից ավելի: Գործով քննությունը տևել է 28 օրից մինչև մեկ տարի մեկ ամիս: Հատկանշական է, որ այն գործով³⁶, որով տեղի է ունեցել 0 նիստ, ըստ էության՝ որոշման հրապարակումը, հայցը վարույթ ընդունելուց մինչև կարճելը տևել է 9 ամիս:

Երկու գործով պատասխանողը կամովին կատարել է հայցվորի պահանջը, հայցվորի միջնորդությամբ կարճվել է:

Հինգ գործով նշված է, որ հայցվորը հրաժարվել է հայցից: Երկու գործով պարզվել է, որ հայցվորը բաց է թողել դատարան դիմելու ժամկետը, գործի վարույթը կարճվել է այդ հիմքով:

Դիտարկված 9 գործից 8-ում դատարանը գտել է, որ քանի որ հայցվորը նախապես վճարել է պետական տուրքի գումարը, ապա այդ հարցը պետք է համարել լուծված: Մեկ գործով Դատարանը եզրակացրել է, որ հայցվորից հոգուտ ՀՀ պետական բյուջեի բռնագանձման է ենթակա 4.000 ՀՀ դրամ՝ որպես նախապես չվճարված պետական տուրքի գումար:

Մեկ գործով Դատարանն արձանագրել է, որ դատական ծախսը բաղկացած է մեկ ոչ գույքային հիմնական պահանջի համար նախատեսված 4.000 դրամի չափով պետական տուրքից՝ համաձայն Պետական տուրքի մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի: Նկատի ունենալով, որ պետական տուրքի վճարումը տարածակետով է դատարանի որոշմամբ, Դատարանը նշել է, որ 4.000 դրամի չափով պետական տուրքը ենթակա է գանձման պատասխանողից: Նշված գործով վարույթը կարճվել էր ՀՀ ՎԴՕ 96-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի հիման վրա, և դատարանը նկատի է ունեցել, որ հայցվորի պահանջն ըստ էության կատարվել է, և ընդունվել է հայցվող վարչական ակտը:

³⁶ ՎԴ/8930/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809939376

Դիտարկված գործերից մեկով³⁷ դատարանը բավարարել է նաև ներկայացուցչի ծախսը: Դատարանը նշել է, որ հաշվի առնելով, որ բարենպաստ վարչական ակտ ընդունել պարտավորեցնելու՝ ՀՀ վարչական դատարան հայց ներկայացնելու նպատակով հայցվորի և փաստաբանի միջև կնքվել է իրավաբանական օգնություն տրամադրելու վերաբերյալ պայմանագիրը, որի գինը կազմում է 150.000 ՀՀ դրամ, Դատարանը ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԵԿԴ/1587/02/10 քաղաքացիական գործով 29.06.2012 թ. և թիվ ՎԴ/4084/05/15 վարչական գործով 07.04.2017 թ. որոշումների լույսի ներքո եզրակացրել է, որ սույն գործի քննության հետ կապված փաստաբանի խելամիտ վարձատրության հատուցման ենթակա գումարի ողջամիտ չափ է 30.000 ՀՀ դրամը: Նշված գործով տեղի է ունեցել երկու նիստ, գործը կարճվել է՝ վեճն ըստ էության սպառվելու հիմքով:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ

Դիտարկված ժամանակահատվածում ԱՍՀ նախարարության դեմ բերված գործերի ճնշող մեծամասնությունը վերաբերել է կենսաթոշակի նշանակման կամ (վերա)հաշվարկման հարցերին: Նշված գործերով հայցերի 70%-ը բավարարվել են ամբողջությամբ:

Արձանագրված խնդիրները վերաբերել են օրենսդրության փոփոխության արդյունքում դատավորների կենսաթոշակի հաշվարկին, կասեցված կենսաթոշակի վերաակտիվացման՝ առանց հավելյալ աշխատանքային փորձը հաշվի առնելու, աշխատանքային ստաժի հաշվարկին, արտադատական կարգով կենսաթոշակի նվազեցմանը, ինչպես նաև երեխայի ծննդյան կապակցությամբ միանվագ նպաստի վճարմանը:

Դիտարկված գործերից 12-ով Դատարանն արձանագրել է, որ վարչական ակտում այն ընդունելու փաստական և իրավական հիմքերը պատշաճ կերպով ներառված և պատճառաբանված չեն եղել: Դիտարկված գործերից 20-ով դատարանն արձանագրել է, որ վարչական մարմնի կողմից փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկում չի իրականացվել:

Դատավորների կենսաթոշակի հաշվարկման վերաբերյալ գործերով Դատարանը նկատել է, որ ԱՍԱ նախարարությունը չի առաջնորդվել ՀՀ սահմանադրական դատարանի կողմից արտահայտված դիրքորոշներով: Այն ինչ դատավորի կենսաթոշակի չափը հաշվարկելիս մինչև «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» օրենքի ուժի մեջ մտնելը, այն է մինչև 01.07.2014 թվականը որպես դատավոր զբաղեցրած վերջին պաշտոնի համար ստացած աշխատավարձը պետք է հաշվարկային հիմք ընդունվի միայն այն դեպքում, եթե այդ աշխատավարձի հիմքով հաշվարկված կենսաթոշակի չափն ավելի մեծ է, քան օրենքով սահմանված աշխատավարձի հիմքով հաշվարկված կենսաթոշակի չափը:

³⁷ ՎԴ/5239/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809935480

Աշխատանքային ստաժի վերաբերյալ գործերով Դատարանը գտել է, որ Հայցվորի վկայակոչած փաստը կասկածի տակ դնելու համար առնվազն պետք է հաստատվեր, որ նշված ժամանակահատվածում նշված վայրում աշխատելու վերաբերյալ գրառումներն արժանահավատ չեն, սակայն վարչական մարմինն այդպիսի ապացույցներ ձեռք չի բերել, իսկ փաստաթղթերի կամ տեղեկությունների պահպանման համար նախատեսված վայրերում տվյալների բացակայությունը չի կարող վկայել տվյալների անարժանահավատության մասին:

Դատարանը նշել է, որ Ծառայությունն անձին կենսաթոշակ նշանակելու իր լիազորությունն իրացնելուց հետո այլևս իրավասու չէ նվազեցնել նշանակված կենսաթոշակի չափը:

Երեխայի ծննդյան կապակցությամբ տրամադրվող նպաստի վերաբերյալ գործերով Դատարանը հաստատել է, որ նպաստի համար կարող է դիմել ծնողներից յուրաքանչյուրը, այլ ոչ թե միայն մայրը, այդ թվում անկախ այն հանգամանքից, թե նոր ծնված երեխայի հորից սերված երեխաների խնամքը հոր կողմից իրականացվել է դատարանի որոշմամբ, թե երեխայի մոր հետ փոխադարձ համաձայնությամբ:

Գործը քննող դատավորների կողմից չի դրսևորվել միանման մոտեցում կենսաթոշակի վճարման պարտավորեցման և երեխայի նպաստի հետ կապված գործերով հայցվորի՝ պետական տուրքի վճարումից ազատված լինելու հարցում: Ավելին, երեխայի նպաստի վճարման հետ կապված նույն դատավորի կողմից քննված երկու գործերից մեկով դատավորը համարել է, որ հայցվորը պետական տուրքից ազատված է, իսկ մյուսով՝ ոչ: Արդյունքում հայցվորների մի մասը ստիպված է եղել վճարել պետական տուրք, իսկ մյուսը՝ ոչ:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Հաշատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը»

- Մշակել արդյունաավետ վերադասությամբ բողոքարկման մեխանիզմ՝ խուսափելու առնվազն այն դատական գործերից, որոնցով դատարանն արդեն իսկ ունի հաստատած պրակտիկա:
- Ապահովել Ծառայության համակարգի յուրաքանչյուր օղակում գտնվող աշխատակիցների, առավելապես՝ հենց ներքին օղակի աշխատակիցներին գիտելիքներով, վերջիններիս պարբերաբար տեղեկացնել հաստատված դատական պրակտիկայի մասին՝ համապատասխանեցնելու վարչարարությունը ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ վարչական դատարանի որոշումներում արտահայտված դիրքորոշումներին:
- Բացառել կենսաթոշակի չափի արտադատական նվազեցումը:
- Ապահովել, որ վարչական վարույթի շրջանակներում իրականացվի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկում, այդ թվում՝ դիմումատուի օգտին վկայող հանգամանքները:
- Ապահովել, որ վարչական ակտում փաստական և իրավական հիմքերը պատշաճ կերպով ներառված և պատճառաբանված լինեն:

«ՀՀ վարչական դատարանին»

- Ապահովել միասնական քաղաքականություն՝ անձանց պետական տուրքից ազատելու, այդ դեպքում պետական տուրքի մասով դատական ծախսերի բաշխման առնչությամբ:

ՀՀ Բարձրագույն դատական խորհրդին՝

- Մահմանել գործավարության պարտադիր պահանջներ՝ ապահովելու դատական գործերի վերաբերյալ տեղեկատվության հրապարակայնությունը, այդ թվում՝ երրորդ անձ ներգրավելու, գույքի վրա արգելանք դնելու և այլ տեսակի որոշումների հրապարակումը: